

## ՆԱՐՂՈՒՆԻ, ՈՐԲՈՒԹԻՒՆ, ԶԱՓԱՇԱՍՈՒԹԻՒՆ

Վերջերս, ԸՆ Նարդունիի անձին ու գործին մասին կատարուած արժեւորման մը առիթով, գրասէր բարեկամ մը կը բողոքէր. թէ ինչպէս կարելի է որոշ ձեւով արտայայտուիլ «լոխումի պէս համով» Նարդունիի մասին:

Հակառակ այդպիսի բողոքի մը, հոս չեմ մտադրեր մնալ գնահատման «լոխումային» մակարդակներու վրայ: Աւելին. Եւսարշ Նարդունիի կենդանագիրը կազմելու համար, արդէն առաջին իսկ տպաւորութեամբ, հարկ կը զգամ զգուշանալու ընթացիկ համերէ, ...գոյներէ՝ պիտի ըսէի: Այքի առաջին իսկ հպումով՝ Նարդունի ատակ է մեր մէջ արթնցնելու հոգե-ախտաբանը՝ իր մասնայատուկ Զ. ճառագայթաչափ գործիքով, ու հակումը՝ մակերեսի քաղցրութիւններու տակ պնդելու դառնութիւններ...

\*\*\*

«Փարիզի Տղոց» խումբին մէջ, Նարդունի միւսներէն կը զատորոշուի իր գործին անմիջական, շեշտօրէն ենթակայական նկարագրով. միանգամայն աչքի զարնող այլուրութեամբ մը, որ ոչ-խորաքափանց աչքին կրնայ երելիլ իբր հմտաբան մարդու «իմքնատպութիւն» մը սոսկ. ուր կը միախառնուին դասական յունարէնէն մինչեւ եբրայեան արշաւող ստուգաբանական մարզանքներ, տորոնի մշակութենէն մինչեւ սխտորաբուժական դեղագիրներու վերծանումը շօշափող շահատակութիւններ. եւ, հակադրաբար այս բոլորին, ռիոշ տարփային լիցք ենթադրող զգայարանականութիւն մը, տարաշխարհիկ ինքեաթի, բանաստեղծականութեան կլիմայ մը, եւ զանոնք պարագրկող դաշնութեան ոլորտ մը: Առաջին իսկ ակնարկով բաւական հակասական այս տարրերը միաբերող վաստակի մը այս պատկերին առջեւ, խորչափող աչքը անմիջապէս հարց կու տայ. – Ի՞նչ է «Ալպոմ»էն մինչեւ «Մեղեղիներ», Մեղեղիներ», եւ «Բանե՛ր, Բանե՛ր»էն մինչեւ «Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ»՝ այս բոլորի ետին պահուող աշխարհը – «Նարդեան» աշխարհը (այս բառը իմս չէ, իրն է...):

Դժուար չէ հոգեվերլուծական ընթերցումը նարդեան այս աշխարհին. հոգեվերլուծական ըլլալու ալ պէտք չունի անհկա բառի ուժեղ-գիտական իմաստով: Արագ ստուգումի մը համար, կը բաւէ անտեսել Նարդունիի գործերուն մէջ անանձնական մեծաթիւ էջեր – պատկանին անոնք արծակ բանաստեղծութեան ոլորտին («Բարելունի Աշտարակը» տիպի), թէ հակին բանասիրական իմտաբանութեան...: Այս վերջիններուն մէջ, անշահեկան կրնար չըլլալ Նարդունիի յարծա-

կունակութիւնը, կռուազանութիւնը – յաճախ անտեղիօրէն բռնու, իբր ներճեալ զանազան ծգտումներու շեղակի դրսեւորում, զրկախտի (*ֆրիւսթրասիոն*) ամենատվորական ախտամիշ: Արդարեւ, այլ ձեւ կարելի չէ ախտանշել հրապարակագիր-բանավիճող Նարդունին, որ «ճանկերը լայն բացած» պատրաստ է յարձակելու հակառակորդին վրայ ու նախակրթարանի աշակերտի ախորժակով զայն «լաւ մը զգելու»...: Բայց նախընտրելի է դիմել անելի ուղղակի մեթոտի, ու խիստ ընտրութեամբ մը՝ իր էջերէն պահել «խոստովանական» բնոյթ ունեցողները, որոնք արդէն մեծ թիւ չեն կազմեր:

\*\*\*

Այս վերջինները, բնական է, պիտի ենթարկուին խորաչափող քննարկումին, որուն կ'ակնարկէի վերը: Որովհետեւ – կարելի է սպասել – Նարդունիի խոստովանութիւնները շատ տեղ մոլորեցնող ալ են. ինչպէս «Մեղեդիներ»ու այն հատուածին, ուր իր ներաշխարհային զարգացման ուղեգիծը ան կը ծուլէ շատ դասական, ու հետեւաբար խաբուսիկ ստորոգութիւններու մէջ: Նախ մանուկ՝ արմաշեան երազաշխարհի ծոցին, ան (իր բնորոշումով) շատ արագ պիտի անցնէ զգայարանական գիմնովութեան փուլը, հագիւ շոյուած՝ բանաստեղծութեան ու աննիւթական սէրերու հեւքէն, ու զարմանալի արագութեամբ հասնի իր գոյութեան երրորդ ու վերջնական հանգրուանին՝ դառնայ «վարդապետ (տոքթոր) փիլիսոփայութեան եւ այստաբանութեան»: Ըլլայ բժիշկ, հոգեբոյժ, «տերվիշ», եւ «մթութիւն հագած», իր մութ սենեակէն դիտէ «լոյսի առուակի մը մէջ բռնուած մարդիկը»:

Սակայն այս հոլովոյթը, մեղմ ըսած, թերի է: Դագիւ առճակատուած նարդեան ուրիշ, հիմնական գրութիւններու, «մթութիւն հագած» բժիշկը կը բռնուի հակասութեան մէջ. ու կ'երեւի մթութիւն հագած... ի՞ր իսկ աչքին: Դոգեբան, հմտաբան, իմացապաշտ ու սկեպտիկ Նարդունիի իրականութիւնը, իր կողմէ ներկայացուած իբր անվիճելի ճշմարտութիւն, ուրեմն չի սպասեր իսկ խորաչափումի լուրջ ձեռնարկութեան. անիկա կը փշրուի կաւէ արծանի պէս – ի՞ր իսկ կողմէ ներկայացուած հակադրուող-հակասող այն մի՛ւս իրականութեան՝ նոյն հատորին մաս կազմող այլ տարրերու հարուածներուն տակ: Երբ, օրինակ, իբր վեցամեայ թոռ մը, գրագէտը կու լայ, ողոքելով հոգին իր մեծ հօր. «Մենձ հայր, մենձ հայր, տես, թռռնիկդ հիմա քիւօ մը տանձով է մնացեր»: Կամ երբ՝ նոյն հատորի էջերուն, կը պատմէ մանուկի լացը՝ այս անգամ սէր փնտռող իր սրտին. «□Ու իմ երեսուն տարուան սիրտս կու լար, կու լար մանուկի մը պէս: Կու լար եւ կուզեր դարձեալ բանաստեղծ դառնալ: Կու լար եւ իր սիրականին անունը կը կանչէր»: Միտք-Նարդունին թո՛ղ ուզածին չափ կարգի հրաւիրէ զայն. «Դուն բժիշկ ես, դուն գիտութեան ու փիլիսոփայութեան մարդն ես, արու ու կորովի»: Անօգուտ. «արու ու կորովի» սիրտը պիտի մնայ նոյն լացող, նոյն մանուկ սիր-

տը՝ գրագետին իսկ բառերով հերքելով «գիտութեան ու փիլիսոփայութեան մարդ» ու մը գոյութիւնը, զայն զեղչելով-վերածելով առասպելի...

\*\*\*

Այս էջերով ու նման այլ էջերով, Նարդունի պաշտելի բարեմտութեամբ մը իր ցաւը կ'ըսէ մեզի - ցաւը՝ կանուխ մանկութենէն հոգիով մարմնով բացայայտօրէն զրկախտահար մարդու մը: Ու որքան ալ աւելի ետք - անձամբ ու անմիջական ընտանիքով - նետուած չըլլայ սուրիական անապատներու արհաւիրքին մէջ, - հաւաքական արձատախլման ու իր տիեզերքը կազմող «մարդկութեան» տեղահանումին ու բնաջնջումին ցնցումը բաւական խոր է որպէսզի սկզբնական զրկախտը ծանրանայ ու բազմապատկուի ուժգնութեամբ: Նոյնիսկ եթէ իր պարագային դրուող մարտահրաւերը, ինչպէս Շուշանեանի մը պարագային, ինչպէս առհասարակ անապատէն փրկուած - վերադարձածներու պարագային, չի կայանար ուղղակի «մահը պատմելու» մէջ...

Նարդեան ներաշխարհը այս մակարդակին ուրեմն յայտնօրէն կը տեղադրուի «պատմական» զրկախտի նշանին տակ: Որքութեան ցաւն է Նարդունիին ցաւը, գլխազիւր Որքութեան - «Չափահաս Որք»ին ցաւը, գործածելով, երկիցս, երիցս իմաստալի այս բնորոշումը, որ ամենայն իրաւունքով փոխ կ'առնեն իր հիմնած ու վարած «Չափահաս Որքերու Միութեան»՝ Զ.Ո.Մ.ի իր իսկ ընտրած անուանակոչումէն: Սակայն, կանխելու գնով ըսեմ, որ Նարդունիի գործին խորքի ընթերցում մը առակ է պարզելու աւելին. որ՝ սեփական Վայրի պատմական ջնջումը կը պատրաստուի աւելի հեռուէն, խոր մանկութենէն եկող «դժբախտ գիտակցութեան» մը հոգեկան խարխսխին վրայ: Այս մասին՝ աւելի վար:

Ակնարկուեցաւ «սեր փնտռելով» լացող սիրտին: Չափահաս-անբուժելի որքութեան այս նարդեան տարբերակը, արդարեւ, առաջին իսկ ակնարկով կը դրսեւորուի սեռային լոյսի մը տակ: «Մեղեդիներ» ու «Փառք Կեռասին» գրութիւնը, ինչպէս վերի առաջին մէջբերումները, իր կարգին անդին կ'անցնի ամէն մեկնաբանութենէ... ինքզինք մեկնաբանելով ամենայն պերճախօսութեամբ: Պատանի՝ հատուածին հերոսը կ'ապրի կեռասով խորհրդանշուող զգայարանական արբույնքի վիճակը, ինքզինք «թագաւոր» կոչած՝ իր սիրականին հետ կեռաս կը գողնայ. կեռաս կ'ուտեն՝ հակառակ «մեծ հոր արգելքին»: Այս վերջինը վրայ պիտի հասնի յանկարծ, ու տեսնէ պատանին՝ աղչիկը գրկած-բարձրացուցած կեռաս քաղելու դիրքի մէջ: Վերջին հատուածը կարելի չէ տալ աւելի բացատրական ու թափանցիկ՝ քան Նարդունին ինքը. կը մէջբերեմ. «Մեղք է, պտղամոլ»:

- Լաւ, եթէ թագաւոր եմ, ո՞վ կարգիլէ ինձի: Երբ կեռաս կուգեմ, պէտք է որ ուտեմ: Ապա թէ ոչ՝ թագաւոր չեմ ըլլար:

.....  
Ափսո՛ս:

Հիմա մեծ հորս «մեղքին» արգելքը չէ որ զոկած է զիս կեռասէն:

Ես հիմա թագաւոր չեմ:

Ես հիմա կեռաս չունիմ: Իսկ նշանածս ալ մեռաւ, ու իմ շրթներուս մէջ կորսուած է համը իր կեռասներուն:

Ու արի՛ւն կու գայ աչքերէս, կեռասի այս տօներուն:

Կարելի չէ անտարբեր ծնալ երեսնամեայ Որբի մը ողբերգութեան այս պատկերին առջեւ, սեռային գրկախտով դրսեւորուող ու մինչեւ հոգե-մտավոր այլազան հաշմունքներ ընդհանրացնող ողբերգութիւնը՝ ամբողջ սերունդի մը...

Նարդունի ոչին, գրեթէ ոչինչ գրած է Աքսորի, Օտարութեան վայրին մասին: Փաստօրէն ան ոչ մէկ առիթ կու տայ մեզի քննելու անոնց մասին իր դիրքորոշումը — բէկուզ բացասական: Հազիւ կը բռնենք իր ակնարկը «Փարիզի մէկ բանուորական թաղին» վրայ, յանկարծ կը սկսի զրուցել հոն կուկուլիկու ընող... «հաւուկին» հետ, որ զինք կը թոցնէ կը տանի ետ՝ ամբողջութիւն ու ժամանակին մէջ... «Քաֆէ տ'Արքուր»ի ծովսերո՞ւն մէջ գտանք զինք վայրկեան մը, կ'ակնկալենք բա՞ռ մը փարիզեան առօրեայի, օտարութեան վայրին մասին, — ան արդէն ճախրելով հասած է Սիփանի փեշերուն (տեսած ըլլար գոնէ Սիփանը, վաճեցի՞ ըլլար գոնէ...): «Մեղեդիներ»-ուն մէջ, կրկին, կը սկսի նկարագրութեանը փարիզցի բժշկի մը սենեակին: Պուտ մը ներկա՞յ կ'ակնկալէ: Աւա՛ղ. Ինտրայի սենեակ-ներաշխարհը, նշանաւոր՝ իր հիմնալի այլութեամբ, չունի աններկայ անվայրութիւնը Նարդունիի սենեակին, ուր կայ հօտը բոժոժներով, մեծ մայրը եւ իր հարսնութեան շապիկը, հեթանոս տօներն ու օրացոյցի կոյսերը. բայց ո՛չ փարիզահայու սենեակը: Ո՛չ Սիփիւքը: Նարդունի, երբ ճառ չի խօսիր, բանասերին այտուժներու վրայ՝ չարշաւեր, կամ հակառակորդ «չի գգեր», — ընկղմած է նախադետեան դրախտի հեշտամբներուն խորը...

Նոյնը՝ ընդհանուր ձեւով՝ «օտար»ի հետ յարաբերութեան հարցին մէջ: Ի յառաջագունէ, Նարդունիի մօտ առկայ որոշ գզայարանականութիւն մը կրնար մեզ յուսադրել յօգուտ արտահայեաց խառնուածքի ու վերաբերումի, կեանքի մէջ. յօգուտ «դուրս»ի հետ կարելի յարաբերութեան մը: Բայց քանի կը յառաջանանք նարդեան աշխարհին մէջ, ատոր հակառակն է որ երեւան կ'ելլէ — «օտար»ին վախը: Այսպէս, «Մեր Գիւղին Լճակը» հեքեաթը կը խօսի գիւղին վճիտ ջուրերով լի՝ ճին մասին, որ սակայն կ'ապականի ակնթարթի մը մէջ՝ «օտար աշխարհէ» վերադարձող գիւղի տղոցմէ մէկուն բերած ախտով:

Պարզ է հեքեաթին թելադրանքը ու ցնցիչ. «օտար»ը ապականող է...

Վախը, ի հարկէ, նախ ազգային-մշակութային առումով օտարին վախն է (Նարդունիի կողմէ պարբերաբար, թեւ ոչ յաճախ, կ'արժարժուի լեզուի կորուսման, ազգա-մշակութային ինքնութեան կորուսման թեման): Բայց անհկա ապա ընդհանրական «օտար»ին վախն է. ծախը ընդհանրապէս «տարբեր»ին, «միւս»ին. նաեւ վախը՝ միւս սեռին...

«Օտար»ին վախն ու արգելումը կը բերեն փորձութիւնը տոհմապղծման, *էն ստեփն*: Փորձութիւնը, - ուրեմն նաեւ վախը, հակադիր այս մէկ վախը, տոհմապղծման վախը... «Մեղեդիներ»-ու երկրորդ իսկ հատուածը՝ «Լճին ժամը», կը պատմէ ոճիրը հարուստ այն գիւղացիին, որ իր գեղեցիկ աղջիկը իր կտրիճ տղուն համար նկատած էր միակ յարմար հարսը, ու պատկած՝ քոյր եւ եղբայր: Ինչպէս տարաշխարհիի ախտով լիճի ապականման հէքեաթին մէջ, իոս եւս անէ՛ծք կը սպասէ գիւղին: Եթէ օտարի ախտը կը ցամքեցնէ գիւղին լիճը, տոհմապղծումի աւարտը կը սրբուի միայն անիծեալներու կլանումովը՝ լիճի ընդերքին...

\* \* \*

Այսքանը բաւ չէ՞ հաստատելու համար, որ Տարաշխարհիի ախտին եւ Սեփականի պղծումին զոյգ վախերը նարդեան անհատականութեան համար խեղդած են ամեն կարելիութիւն *ներկայ անհատ* դառնալու (այս տարագի զոյգ իմաստներով...): Նարդունիի մատնանշուած այս կեցուածքներուն մէջէն կարծիր թելի պէս անցնող ու անոնց միութիւնը կազմող գիծը բացարձակ մերժումն է ներկային, ներկայ վայրին ու ժամանակին: Ու ա՛յ զարմանալի չէ, որ նարդեան աշխարհի բոլոր հարազատ արտադրութիւնները յատկանշուին իրենց յղումովը նախ-աղետեան աշխարհին, որ հէքեաթ է, անիրական, անչափահաս ու անսեռային: Նարդունիի գործը այս գիւղ պէտք է վճարէ՝ իր վաւերականութիւնը շահելու համար. ան վաւերական է իբր հէքեաթ, իբր հնագիտական առարկայ, իբր գեղօր: Իբր վկայութիւն՝ բացակայէն, անհատի նախապատմութենէն, նախ-աղետէն: Ասկէ՛ իր դաշնութիւնը, կշռութային գեղագիտական իր յատկանիշները: Ասկէ՛ նաեւ Մարդուն աշխարհի թափանցիկութիւնը, միամտութիւնը՝ իր ցաւը ըսած պահերուն: Բայց, ահաւասիկ, այդ ցաւն ու վերքը բացակայութիւն մըն է, չգոյութիւնն է մարդուն՝ որ Նարդունիի բժշկագիտական դասագիրքերն իսկ «չափահաս անհատ» կը կոչեն:

Ու ցաւով ու խոր հասկացողութեամբ կը հաստատեմ, վերջացնելու համար, որ Նարդունի անհատը, արդէն խոցելի՝ հեռու մանկութենէ մը եկող խոցերով, չէ վերապրած, անդր-ապրած՝ իր գիւղի մահէն, իր նշանածի մահէն, Ապրիլ ամիսէն անդին: Կեռասի մահէն անդին: Եւ նարդեան գրականութիւնը էապէս՝ վերապրումի, յարութեան այս անկարելիութեան պատմութիւնն է միայն. - ողբերգական, բայց եւ ախտաբանական: